ՏԵՂԵԿԱՆՔ

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

~~Հոդված 41. Կրթական գործունեության լիցենզավորումը~~

~~1. Սույն օրենքով նախատեսված կրթական ծրագրերը և նախադպրոցական ծառայությունը կարող են իրականացվել հանրակրթական, մասնագիտական և բարձրագույն կրթության մակարդակի համապատասխան կրթական ծրագրի իրականացման իրավունքի, ինչպես նաև յուրաքանչյուր աստիճանի ու որակավորումների համար լիցենզիայի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ու պայմաններով:~~

~~2. Կրթական գործունեության լիցենզիան տալիս է կրթության պետական կառավարման լիազոր մարմինը:~~

~~3. Կրթության համապատասխան մակարդակներում կրթական ծրագրի իրականացման իրավունքի տրամադրման պայման են՝~~

~~1) կրթական գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ շենքի և ուսումնական տարածքի առկայությունը, որի նկատմամբ ուսումնական հաստատությունն ունի սեփականության, վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունք.~~

~~2) ուսումնական գործընթացին օժանդակող մարզական տարածքի կամ դրա օգտագործման կամ ծառայությունների մատուցման պայմանագրի առկայությունը և գրադարանային համապատասխան հագեցվածությամբ տարածքների առկայությունը՝ լիազոր մարմնի սահմանած սանիտարահիգիենիկ և տեխնիկական անվտանգության նորմերին համապատասխան.~~

~~3) լսարանային, գործնական ուսուցման գործընթացին օժանդակող ուսումնաարտադրական, լաբորատոր տարածքների և բազաների առկայությունը՝ սանիտարահիգիենիկ և տեխնիկական անվտանգության նորմերին համապատասխան.~~

~~4) ուսումնական հաստատության հինգ տարվա ռազմավարական ծրագրի առկայությունը:~~

~~3.1. Բարձրագույն կրթության ոլորտում բուհերի և կրթական ծրագրերի լիցենզավորման պայմաններն ու պահանջները սահմանվում են «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքով և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով:~~

~~4. Կրթության համապատասխան մակարդակի յուրաքանչյուր աստիճանի ու որակավորման համար լիցենզիան տրվում է հետևյալ պայմաններն ապահովելու դեպքում.~~

~~1) տվյալ կրթական ծրագրի աստիճանի (մակարդակի) կամ որակավորման ուղղվածությանը համապատասխան լաբորատորիաների, ուսումնաարտադրական տարածքների (արհեստանոցների), ուսումնական գույքի և սարքավորումների, գրադարանային-տեղեկատվական համակարգի առկայությունը կամ դրանց օգտագործման կամ ծառայությունների մատուցման պայմանագրի առկայությունը՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած հագեցվածության չափաքանակների.~~

~~2) տվյալ կրթական ծրագրի աստիճանը (մակարդակը) կամ որակավորումը (ուղղվածությունը) ապահովող փաստաթղթերի և ուսումնամեթոդական փաթեթի առկայությունը.~~

~~3) տվյալ կրթական ծրագրի աստիճանը (մակարդակը) կամ որակավորումը (ուղղվածությունը) ապահովելու համար անհրաժեշտ մանկավարժական և ուսումնաօժանդակ աշխատողների առկայությունը:~~

~~5. Լիցենզավորման, լիցենզիայի գործողության կասեցման, դադարեցման, բողոքարկման և այլ իրավահարաբերությունները կարգավորվում են լիցենզավորման և կրթության համապատասխան մակարդակի իրավահարաբերությունները կարգավորող օրենքներով և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական այլ ակտերով: Կրթության համապատասխան մակարդակը կարգավորող օրենքով կարող են սահմանվել լիցենզավորման լրացուցիչ պայմաններ:~~

~~6. Կրթական ծրագրերի, ինչպես նաև համապատասխան կրթական ծրագրի յուրաքանչյուր աստիճանի ու որակավորումների մասով արված սահմանային տեղերի փոփոխությունը սահմանվում է լիցենզիայի ներդիրում, և յուրաքանչյուր փոփոխության դեպքում տրվում է հերթական ներդիր:~~

Հոդված 1. «Կրթության մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-297 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 41-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 41. Կրթական գործունեության լիցենզավորումը

1. Սույն օրենքով նախատեսված հանրակրթական ծրագրերը և նախադպրոցական ծառայությունը կարող են իրականացվել լիցենզիայի առկայության դեպքում: Մասնագիտական և բարձրագույն կրթությունը կարող են իրականացվել՝ մասնագիտական և բարձրագույն

կրթության մակարդակի համապատասխան կրթական ծրագրի իրականացման իրավունքի, ինչպես նաև յուրաքանչյուր աստիճանի ու որակավորումների համար լիցենզիայի առկայության դեպքում: Լիցենզավորման հարաբերությունները կարգավորվում են կրթության համապատասխան մակարդակի իրավահարաբերությունները կարգավորող օրենքներով և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ու պայմաններով:

2. Կրթական գործունեության լիցենզիան տալիս է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

3. Կրթության համապատասխան մակարդակը կարգավորող օրենքով կարող են սահմանվել լիցենզավորման լրացուցիչ պայմաններ:

4. Լիցենզիայի գործողության կասեցման, դադարեցման, բողոքարկման և այլ իրավահարաբերությունները կարգավորվում են լիցենզավորման և կրթության համապատասխան մակարդակի իրավահարաբերությունները կարգավորող օրենքներով և նորմատիվ իրավական այլ ակտերով:

5. Կրթական ծրագրերի, ինչպես նաև համապատասխան կրթական ծրագրի յուրաքանչյուր աստիճանի ու որակավորումների մասով արված սահմանային տեղերի փոփոխությունը՝ սահմանվում է լիցենզիայի ներդիրում, և յուրաքանչյուր փոփոխության դեպքում տրվում է հերթական ներդիր:»:

Հոդված 2.

~~2.~~ Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: